ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2212-Ա/2 **«25» հոկտեմբերի, 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC» ԾՐԱԳԻՐ 2023/2» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1769-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 23-ին կայացած նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023/2» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝
   – ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,
   – կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,
   – ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի նոյեմբեր ամսից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. հոկտեմբերի 25 -ի
N 2212 -Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC» ԾՐԱԳԻՐ 2023/2» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Կենսաբանական գիտություններ	23/2PostDoc-1F001	Բայդյուկ Եկատերինա	Սրտի քրոնիկ անբավարարության դեպքում սրտամկանի գրգռում-կծկման բաժինների վերափոխում.	ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2	Մաթեմատիկա	23/2PostDoc-1A002	Կայյուննապարա Դիվյա Ջոզեֆ	ԱՌԱՁԻՆ ԿԱՐԳԻ ՀԻՊԵՐԲՈԼԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՔԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	Մաթեմատիկա	23/2PostDoc-1A003	Կեյշամսի Զահրա	Կոնվուլյացիա, Ֆուրիեի վերլուծություն և բաշխումներ Բանախի և Ֆրեշետի տարածություններում՝ շատ թույլ լուծումների ուսումնասիրության համար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
4	Մաթեմատիկա	23/2PostDoc-1A004	Միկաեիլի Նիա Մոնիրե	Օրնշտայն-Ուլենբեկ օպերատորի հետ կապված ջերմության, ալիքի և Շրյոդինգերի հավասարումների շատ թույլ լուծում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ